

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավասախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քառօրյա նիստերի օրակարգում ընդգրկված «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան

օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (փաստաթղթերի համապատասխան կողերը՝ Կ-1157-02.05.2011, 06.07.2011-ԱՄ-010/0, Կ-1157<sup>1</sup>-02.05.2011, 06.07.2011-ԱՄ-010/0 և Կ-1157<sup>2</sup>-02.05.2011, 06.07.2011-ԱՄ-010/0) փաթեթն առավել համապարփակ և ամբողջական կարգավորումներ է տալիս մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացմանը՝ բացառելով վերջինիս կոմերցիոն նպատակներով օգտագործումը, ինչը թույլատրված է պատգամավորի ներկայացրած նախագծերի փաթեթով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի քննարկմանը և պնդում է նախագծերի փաթեթի՝ իր կողմից ներկայացված տարբերակը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությունը քննարկվել է Հանրային խորհրդի առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի կոլեգիայի նիստում և կոլեգիան քննարկումներից և առաջարկություններից հետո միաձայն որոշել է հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացրած «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմանը հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը:

Կից ներկայացվում են Հանրային խորհրդի նախագահի ուղեկցական նամակը, Հանրային խորհրդի առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի կոլեգիայի նիստի արձանագրությունը և օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**I. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**

**1. Նախագծերի կարգավորման արդյունքները.**

Օրենքի նախագծի ընդունումը առողջապահության համակարգի վրա էական ազդեցություն չի ունենա, բացառությամբ

1) նախագծի հոդված 2-ով փոփոխվող հոդված 11-ի երկրորդ մասի, որի ընդունումը որոշակի բացասական ազդեցություն կունենա առանձին քաղաքացիների կողմից վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ տրամադրվող բժշկական օգնության և սպասարկում ստանալու իրավունքի իրացմանը:

2) առաջարկվող նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվող փոփոխությունը դրական կանդիդատներ առողջապահության համակարգի մոր և մանկան առողջության ոլորտի վրա, քանի որ կրկնաձին կանանց մոտ բարձր է կրկին հղիանալու, անվտանգ ծննդաբերության և առողջ սերունդ ունենալու հնարավորությունը, ինչպես նաև հղիությանը և ծննդաբերությանը կնոջ հոգեբանական պատրաստվածությունը:

**3. Նախագծերի կիրարկման արդյունքում կանխատեսող հետևանքները գնահատելու ժամանակացույցը.**

Նախագծերի ընդունումից հետո կանխատեսվող հետևանքները հնարավոր կլինի գնահատել օրենքից բխող իրավական ակտերի մշակումից և կիրարկումից հետո երեք տարի անց:

**II. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի**

Օրենքների ընդունումը առողջապահական համակարգի վրա ազդեցություն չի ունենա:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»  
 ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ ընտանեկան  
 օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ  
 ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի  
 տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման  
 ազդեցության գնահատման**

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է փոխնակ (սուրոգատ) մայրերի իրավահարաբերություններին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

### **մի շարք օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծերով կարգավորվող շրջանակները առնչվում են *փոխնակ մայրության ծառայությունների* շուկայի հետ:

Նախագծերով սահմանվում են որոշ հասկացություններ, կարգավորվում տվյալ շուկայում առկա որոշ հարաբերություններ, այդ թվում՝ արգելվում փոխնակ մայրության ծառայությունների գովազդը, ինչպես նաև հատուցելի հիմունքներով փոխնակ մայրության ծառայությունների առաջարկելու որևէ այլ ձևով միջնորդություն անելը:

Ընդհանրապես ծառայությունների գովազդի լիակատար արգելքը առաջացնում է միմյանց հետ մրցելու մատակարարների հնարավորության սահմանափակման խնդիր: Սակայն հաշվի առնելով տվյալ ծառայությունների շուկայի առանձնահատուկ բնույթը, ինչպես նաև այն, որ ներկայումս ևս տվյալ ծառայությունների գովազդ փաստացի չի իրականացվում՝ Նախագծերի ընդունմամբ տվյալ շուկայում մրցակցության բնագավառի վրա ազդեցություն չի լինի:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ արձանագրվել է Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

### **ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» **Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին>> և <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների (այսուհետ՝ օրենքներ) նախագծերի ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանալ:

3. Օրենքները բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

#### **ՀԱԿԱԿՈՒՌՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

#### **Եզրակացություն**

**«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ /այսուհետ՝ նախագծեր/ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագծերն ունեն չեզոք ազդեցություն:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու  
մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու  
մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության  
օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի  
բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

ա/ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և  
«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ  
օրենքների նախագծերի ընդունումը կամ չընդունումը ՀՀ պետական բյուջեի մուտքերի և ելքերի  
փոփոխմանը չի հանգեցնում:

բ/ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենս-  
գրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը կամ  
չընդունումը ՀՀ պետական բյուջեի ելքերի փոփոխմանը չի հանգեցնում, իսկ նախագծի  
ընդունումը կարող է հանգեցնել վարչական իրավախախտումների գծով պետական բյուջեի մուտ-  
քերի ավելացմանը, ինչի չափը հնարավոր չէ գնահատել՝ ելնելով իրավախախտումների  
կանխատեսման համար անհրաժեշտ քանակական տվյալների անկանխատեսելիությունից:



«26» 01 2012թ.  
7-3

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ

ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարչապետ

Ի պատասխան 2011թ. նոյեմբերի 30-ի ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ.Սարգսյանի /#02/14.7/19314-11/ գրության՝ կապված «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, «ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ՀԽ կարծիք ներկայացնելու հետ, տեղեկացնում եմ Ձեզ, որ վերը նշված փաթեթը 2011թ. դեկտեմբերի 6-ին քննարկվել է ՀԽ առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի կոլեգիայի նիստում և ընդունվել է որոշում:

Նիստի արձանագրությունը և քաղվածքը կցվում են. առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

+374 10 523405  
+374 10 523407

+374 10 523416

info@publiccouncil.am

www.publiccouncil.am

ՀՀ ՎԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Վազգեն Սարգսյան 26/1. «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն

PUBLIC COUNCIL OF RA

Vazgen Sargsyan 26/1. «Erebuni plaza» business center, Yerevan 0010, Republic of Armenia

ОБЩЕСТВЕННЫЙ СОВЕТ РА

Вазгена Саркисяна 26/1. бизнес-центр «Эребуни плаза», Ереван 0010, Республика Армения



ք. Երևան

06.12.2011թ.

Հանրային Խորհրդի առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի կոլեգիայի նիստի

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Մասնակցում էին՝

Կոլեգիայի անդամները՝

- Դ. Դումանյան, ՀԽ առողջապահության և սոցիալական հանձնաժողովի նախագահ
- Ա. Մինասյան, ՀԽ անդամ
- Մ. Մարդիյան, ենթահանձնաժողովի նախագահ
- Ս. Դադբաշյան, ենթահանձնաժողովի նախագահ
- Ն. Վանեսյան, ենթահանձնաժողովի նախագահ
- Մ. Խաչատրյան, ենթահանձնաժողովի նախագահ
- Ռ. Աբրահամյան, ենթահանձնաժողովի նախագահ
- Բ. Հարությունյան, հանձնաժողովի անդամ
- Ս. Բիշարյան, հանձնաժողովի անդամ

Հրավիրված էին՝

- Վ. Մանուկյան, Հանրային խորհրդի նախագահ
- Ա. Օրբելյան, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
- Գ. Բաղիրյան, ՀԽ պետաիրավական հանձնաժողովի նախագահ
- Ա. Բաբլոյան, ԱԺ առողջապահության, մայրության և մանկության մշտական հանձնաժողովի նախագահ
- Գ. Օկոն, Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնի տնօրեն
- Գ. Բեգլարյան, Ընտանիքի պլանավորման կենտրոնի տնօրեն
- Ս. Ուռումյան, «Շենգավիթ» ԲԿ տնօրեն

**ՕՐԱՎՈՐԳ**

1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

**ԼՍՎԵՑ՝**

*Ռ. Աբրահամյան-*

Ներկայացրեց օրենքում առաջարկված փոփոխություններն ու լրացումները:

**Ելույթ ունեցան**

*Ա. Օրբեյլյան –*

Տեղեկացրեց, որ արդարադատության նախարարությունը կողմ է ներկայացված փոփոխություններին ու լրացումներին:

*Ա. Բարլոյան –*

Տեղեկացրեց, որ ԱԺ-ում ստեղծված աշխատանքային խմբի կողմից լավ աշխատանք է տարվել ներկայացված փոփոխությունների ու լրացումների կապակցությամբ և որ պետք է ողջունել դրանք:

*Գ. Օկոն -*

Ներկայացրեց Մոյր և մանկան առողջության պահպանման կենտրոնում իրականացվող գործընթացը՝ կապված փոխնակ մոր հետ:

*Ս. Ուռույան –*

Տեղեկացրեց, որ ողջունելի է համարում ներկայացված փոփոխությունները:

Քննարկումներից ու առաջարկություններից հետո Կոլեգիան միաձայն **ՈՐՈՇԵՑ՝**

1. Հավանություն տալ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում կառավարության կողմից ներկայացված փոփոխություններին և լրացումներին:
2. Առաջարկել նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ կերպ՝ «5. Փոխնակ մայրը չի կարող միաժամանակ լինել ձվաբջջի կրող»:

ՀԽ առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ

Դ. Դումանյան

ք. Երևան

06.12.2011թ.

**Ք Ա Ղ Վ Ա Մ Ք**

Հանրային Խորհրդի առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի  
Կոլեգիայի նիստի արձանագրությունից

Մասնակցում էին՝

Կոլեգիայի անդամները՝

Դ. Դումանյան, ՀԽ առողջապահության և սոցիալական  
հանձնաժողովի նախագահ

Ա. Մինասյան, ՀԽ անդամ

Մ. Մարդիյան, ենթահանձնաժողովի նախագահ

Ս. Դադբաշյան, ենթահանձնաժողովի նախագահ

Ն. Վանեայան, ենթահանձնաժողովի նախագահ

Մ. Խաչատրյան, ենթահանձնաժողովի նախագահ

Ռ. Աբրահամյան, ենթահանձնաժողովի նախագահ

Բ. Հարությունյան, հանձնաժողովի անդամ

Մ. Բիշարյան, հանձնաժողովի անդամ

Հրավիրված էին՝

Վ. Մանուկյան, Հանրային խորհրդի նախագահ

Ա. Օրբելյան, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Գ. Բաղիրյան, ՀԽ պետախրավական հանձնաժողովի նախագահ

Ա. Բաբլոյան, ԱԺ առողջապահության, մայրության և մանկության  
մշտական հանձնաժողովի նախագահ

Գ. Օկոն, Մոր և մանկան առողջության պահպանման կենտրոնի տնօրեն

Գ. Բեգլարյան, Ընտանիքի պլանավորման կենտրոնի տնօրեն

Ս. Ուռույան, «Շենգավիթ» ԲԿ տնօրեն

**ՕՐԱԿԱՐԳ**

1. «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Քննարկումներից ու առաջարկություններից հետո Կոլեգիան միաձայն **ՈՐՈՇԵՑ**՝

1. Հավանություն տալ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում կառավարության կողմից ներկայացված փոփոխություններին և լրացումներին:
2. Առաջարկել նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ կերպ՝ «5. Փոխնակ մայրը չի կարող միաժամանակ լինել ձվաբջջի կրող»:

ՀԽ առողջապահության և սոցիալական  
հարցերի հանձնաժողովի նախագահ

Դ. Դումանյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու  
մասին**

**Հոդված 1.** «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 12-րդ կետով.

«12) հարազատ՝ ազգական (ազգակցական կապի մեջ գտնվող եւ մինչեւ նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձ)»:

**Հոդված 2.** Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաները կիրառվում են միայն վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձի (անձանց) մոտ վերարտադրողական առողջության խնդիրների առկայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած բժշկասոցիալական ցուցումների հիման վրա:»:

**Հոդված 3.** Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված պայմանագրով կարող է նախատեսվել նաեւ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձի (ամուսինների) կողմից փոխնակ մոր հղիության, ծննդաբերության, կյանքի ապահովագրության, փոխնակ մոր եւ նրա ամուսնու հոգեբանական, առողջապահական, իրավական խորհրդատվության ստացման, մինչեւ երեխային պայմանագիր կնքած անձին կամ ամուսիններին հանձնելու պահը փոխնակ մոր կողմից երեխային խնամելու եւ վերոգրյալ բոլոր ծախսերից ածանցյալ ողջամիտ այլ ծախսերի եւ բաց թողնված օգուտների փոխհատուցումը:»:

**Հոդված 4.** Օրենքի 15-րդ հոդվածում.

1) 1-ին մասը «ունեն» բառից հետո լրացնել «նախկինում առնվազն մեկ անգամ ծննդաբերած,» բառերով.

2) 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5. Փոխնակ մայրը չի կարող միաժամանակ լինել նաեւ ձեւաբջջի դոնոր»:

3) ուժը կորցրած ճանաչել 6 րդ մասը.

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9.1-րդ մասով.

«9.1. Փոխնակ մայրը պարտավոր է խնամել իրենից ծնված երեխային մինչեւ նրան սահմանված կարգով պայմանագիր կնքած անձին կամ ամուսիններին հանձնելու պահը:»:

5) ուժը կորցրած ճանաչել 13 րդ մասը:

**Հոդված 5.** Օրենքը լրացնել նոր 15.1 րդ հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 15.1. ՓՈԽՆԱԿ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՉ ԿՈՍԵՐՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԸ

1. Արգելվում է փոխնակ մայրության ծառայություններ գովազդելը տեղեկատվության տարածման որեւէ ձեւով, ինչպես նաեւ հատուցելի հիմունքներով փոխնակ մայրության ծառայություններ առաջարկելու որեւէ այլ ձեւով միջնորդություն անելը:»:

**Հոդված 6. Անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքով նախատեսված դրույթները չեն տարածվում այն պայմագրերի վրա, որոնք կնքվել են մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը:

Նախագիծ  
Պ-1320<sup>2</sup>-29.12.2011-ԱԱ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին**

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը /այսուհետ՝ օրենսգիրք/ լրացնել հետեւյալ բովանդակությամբ 47.7-րդ հոդվածով.

«Հոդված 47.7. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման պայմանները խախտելը

1. Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման պայմանները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչեւ երկուհազարապատիկի չափով:

2. Սույն հոդվածով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից մինչեւ չորսհազարապատիկի չափով:»:

**Հոդված 2.** Օրենսգրքի 244.14-րդ հոդվածում «45-47.4-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «45-47.4-րդ եւ 47.7-րդ հոդվածներով» բառերով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ****Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի ընտանեկան օրենսգրքի 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Երեխայի սերումը այն ծնողներից (ծնողից), ովքեր օրենքով սահմանված կարգով օգտվել են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից՝ արհեստական սերմնավորում կամ արհեստական բեղմնավորում եւ սաղմի ներպատվաստում եւ (կամ) պտղի հասունացում այլ կնոջ (փոխնակ մոր) միջոցով, հաստատվում է երեխայի՝ բժշկական կազմակերպությունում փոխնակ մորից ծնված լինելու փաստը հավաստող փաստաթղթերով եւ փոխնակ մոր եւ ծնողների (ծնողի) միջեւ «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

**«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» , «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածով առաջարկվում է սահմանել «հարազատ» հասկացությունը, ինչը իրավական որոշակիություն կմտցնի Օրենքում, քանի որ ներկա խմբագրությամբ Օրենքում գործածվում է «հարազատ» հասկացությունը, սակայն սահմանված չէ դրա բովանդակությունը:

Օրենքը նախատեսում է վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքը: Սույն ոլորտը կարգավորող միջազգային փաստաթղթերի, ինչպես նաեւ միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ այս իրավունքի ծագումը պետք է պայմանավորված լինի այն անձանց ծնող դառանալու հնարավորության անհրաժեշտությամբ, ովքեր զրկված են դրանից՝ բացառապես առողջական պատճառներով: Հետեւաբար, այս իրավունքի կիրառումը թույլատրելի է միայն այս կատեգորիայի անձանց նկատմամբ: Նման կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաեւ էթիկական եւ բարոյական պահանջներով, քանի որ առողջական խնդիրներից բացի, այլ պատճառները չեն կարող հիմք լինել վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքն իրացնելու համար:

Օրենքը՝ որպես վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների տարատեսակ, նախատեսում է նաև փոխնակ մայրության ինստիտուտը: Նախագծում իրացվել են այսպես կոչված «կոմերցիոն» փոխնակ մայրության իրավահարաբերությունների կարգավորման համար էական համարվող եւ այս ոլորտում աշխարհի փորձառու երկրների օրենսդրությամբ արդեն իսկ ամրագրված մի շարք դրույթներ: Այսպես, աշխարհի զարգացած այնպիսի երկրներում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, Ավստրալիան, Նիդերլանդները, վաղուց օրենսդրորեն կարգավորված են «կոմերցիոն» փոխնակ մայրության հետ կապված հարցերը: Առաջադեմ աշխարհը գնացել է երեք բացառությունների ճանապարհով, ի մասնավորի՝

ա/ արգելվում է փոխնակ մայրության ծառայություններ գովազդելը տեղեկատվության տարածման որեւէ ձեւով,

բ/ արգելվում է կոմերցիոն նպատակներով փոխնակ մայրության ծառայություններ առաջարկելու որեւէ ձեւով միջնորդություն անելը,

գ/ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձի (ամուսինների) կողմից փոխնակ մորը կարող են փոխհատուցվել միայն փոխնակ մոր հղիության, ծննդաբերության, մինչեւ երեխային պայմանագիր կնքած անձին կամ ամուսիններին հանձնելու պահը փոխնակ մոր կողմից երեխային խնամելու եւ դրանցից աժանցյալ ողջամիտ ծախսերը:

Օրենքը սահմանում է փոխնակ մորը վերաբերող մի շարք պահանջներ, մասնավորապես՝ տարիքի վերին եւ ներքին ցենզ, առողջական վիճակ: Այս շարքում, սակայն սահմանված չէ երեխային հանձնելու փոխնակ մոր հոգեբանական պատրաստվածության խնդիրը: Որպես փոխնակ մայր հանդես եկող կինը առնվազն մեկ անգամ արդեն իսկ պետք է ծննդաբերած լինի, ինչը հնարավորություն կստեղծի ապագա փոխնակ մորը գնահատելու երեխային հանձնելու հոգեբանական իր պատրաստվածությունը: Սահմանվում է նաև, որ փոխնակ մայրը չի կարող միաժամանակ լինել նաև ծեւաբջջի դոնոր:

Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման պայմանների խախտման համար իրավական հետեւանքներ նախատեսված չեն, ինչը վտանգում է դրանց անշեղ իրականացումը: Խնդրի կարգավորման նպատակով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում նախատեսվում է սահմանել համապատասխան պատասխանատվություն:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը չի նախատեսում երեխայի սերման փաստի հաստատումը այն ծնողներից (ծնողից), ովքեր օրենքով սահմանված կարգով օգտվել են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից՝ արհեստական սերմնավորում կամ արհեստական բեղմնավորում եւ սաղմի ներպատվաստում եւ (կամ) պտղի հասունացում այլ կնոջ (փոխնակ մոր) միջոցով, ինչը չի բխում վերարտադրողական իրավունքի իրացման եւ վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման էությունից եւ բովանդակությունից: Նախագծերի փաթեթը լուծում է նաև այս խնդիրը: